Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱԴ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան -1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.04.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br><br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
14:18:36 AMST

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 11 դեպքի վարում (վերափաստագրման գործընթացի կազմակերպում ԸՆ համակարգում-9, աջակցող միջոցի ձեռքբերման կազմակերպում-2):4 շահառուի համար սոցիալական աշխատողը առցանց դիմում է ներկայացրել կենսաթոշակը և սոցիալական նպաստը վճարող կազմակերպության փոփոխություն նպատակով:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 3 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը՝ որոշ դեպքերում նաև բարելավմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը,պահպանմանը,անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 6 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 13 շահառու: Կազմակերպված միջոցառումներն են.
  - Սուրբ Հարության տոնին նվիրված
  - Երևանյան «Բալետ-ֆեստ»-ի շրջանակներում՝ Ալ. Սպենդիարյանի անվան «Կարապի լիճ» բալետ, Թբիլիսիի ազգային բալետի և Սանկտ Պետերբուրգի Բորիս Էյոմանի ակադեմիական բալետային 4-օրյա ներկայացումներ,
  - Առնո Բաբաջանյան մեծ համերգասրահում կազմակերպված «Ակունք» ազգագրական համույթի համերգային ներկայացում,
  - Ակրամ Խանի «Ժիզել» անգլիական ազգային բալետային ներկայացում,
  - «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային երաժշտական փառատոնի հաղթողների գալա համերգային ծրագիր,
  - «Ոսկե Սերունդ» սոցիալ- կրթական ճամբար:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է

տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, գրասանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 30 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 4 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 2 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 13 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա: Թվով 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ, 2 շահառուի համար իրակացվել է անվճար աուդիոմետրիա: 3 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 4 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջինիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուին, 3 շահառուի համար իրականացվել է ստացիոնար բուժման կազմակերպում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութը.

- Սուրբ Հարության տոնին նվիրված միջոցառումից կադրեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100081543423963/videos/456054626768871/ ):
- «Ոսկե Սերունդ» սոցիալ-կրթական ամառային ճամբարին շահառուների մասնակցության մի քանի կադրեր (կարելի է տեսնել հետևյալ հղումով ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid045BG445S6HCSeXnfRWKRpwpCSCGGGq25nyDwSt9qo5UdMZg8qyy4nb4eugLyXgoFl&id=100081543423963):
- Անգլիայի ազգային բալետի՝ Ակրամ Խանի լեգենդար «Ժիզել» բալետային ներկայացմանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում շահառուների մասնակցության մի քանի կադրեր(կարելի է տեսնել հետևյալ հղումով ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02HG5sBYyroMXzeG6xQRot9cpuCbwi6Wm52ap9wdGtvxfZbjDp56LyS8fXoFPpWaMvl&id=100081543423963):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,

- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Աջափնյակի տարածքային կենտրոնի թիմի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցել է տարեցների պաշտպանության ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչների՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած մեկօրյա վերապատրաստմանը, փորձի փոխանակմանը: Վերապատրաստումն իրականացրել փորձագետ, ով տիրապետում է մի շարք երկրներում տարեցների խնամքի և աջակցման կենտրոնների հիմնադրման և գործարկման աջակցման փորձին:
Համայնքը սպասարկող թիմը մասնակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական դեպքի վարում» թեմայով դասընթացին:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 73/74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 63 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 2<br>Բ - 74 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 13 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 3 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 3 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Միխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն, ազգանուն)